

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

«---» ----- 2021թ.

N --- -Ա

ՈՐՈՇՈՒՄ

**ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ «ՔԱՂԱՔԱՊԵՏԵՐԻ ԴԱՇՆԱԳԻՐ
ՀԱՆՈՒՆ ԿԼԻՄԱՅԻ ԵՎ ԷՆԵՐԳԻԱՅԻ» ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹՅԱՆԸ
ՄԻԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի
12-րդ հոդվածի 1-ին մասի 33-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Համաձայնություն տալ միանալու Եվրոպական Միության «Քաղաքապետերի
դաշնագիր հանուն կլիմայի և էներգիայի» նախաձեռնությանը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ «ՔԱՂԱՔԱՊԵՏԵՐԻ ԴԱՇՆԱԳԻՐ ՀԱՆՈՒՆ ԿԼԻՄԱՅԻ ԵՎ ԷՆԵՐԳԻԱՅԻ» ՆԱԽԱՁԵՆՈՒԹՅԱՆԸ ՄԻԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ

Համաշխարհային բնապահպանական մարտահրավերների համատեքստում քաղաքային իշխանության առաջնահերթություններից է կայուն զարգացման ներդրումը քաղաքային կառավարման տարբեր ենթակառուցվածքներում: Դա պաշտոնապես ամրագրվեց, երբ 2017թ. Հայաստանի Հանրապետությունը վավերացրեց ՄԱԿ-ի Կլիմայի փոփոխության կոնվենցիայի Փարիզյան համաձայնագիրը՝ պարտավորվելով սահմանափակել իր արտանետումները և ավելացնել կլիմայի փոփոխության հետևանքներին հարմարվելու/ադապտացիայի միջոցառումների իրականացումը:

Այս տեսակետից Երևանի քաղաքապետարանն իր ակտիվ մասնակցությունն է ցուցաբերում քաղաքի կայուն զարգացման և միկրոկլիմայի մեղմանն ուղղված տարբեր միջազգային և տեղական ծրագրերի մշակման գործընթացում:

Երևան քաղաքի ավագանու 2014 թվականի սեպտեմբերի 9-ի հ.204-Ա որոշման համաձայն՝ Երևանի քաղաքապետարանը միանալով Եվրոպական Միության «Քաղաքապետների Դաշնագիր» նախաձեռնությանը, պարտավորություն էր ստանձնել իր լիազորությունների շրջանակներում մինչև 2020 թվականը կրճատել ջերմոցային գազերի արտանետումներն առնվազն 20%-ով և նպաստել քաղաքային տնտեսության զարգացմանը՝ կայուն էներգետիկ զարգացման սկզբունքներին համապատասխան: Դաշնագրի շրջանակներում ՄԱԶԾ աջակցությամբ մշակվել և հաստատվել է Կայուն էներգետիկ զարգացման գործողությունների ծրագիրը (ԿԷԶԳԾ), որի շրջանակներում Երևան համայնքում՝ քաղաքային տնտեսության տարբեր ոլորտներում իրականացվել են մի շարք բնապահպանական ծրագրեր: Մասնավորապես, հաշվի առնելով Դաշնագրին Երևանի միացած լինելու հանգամանքը, ԵՄ կողմից հաստատվել է 8 մլն եվրո դրամաշնորհ նոր աղբավայրի կառուցման համար, տրամադրվել է 1 մլն եվրո դրամաշնորհ «ԵՄ-ն Երևանի համար. Արևային համայնք» ծրագրի իրականացման համար:

Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծով համաձայնություն է տրվում միանալու «Քաղաքապետների դաշնագիր հանուն կլիմայի և էներգիայի» նախաձեռնությանը, որով Երևանը ստանձնում է մինչև 2030 թվականը ջերմոցային գազերի արտանետումներն առնվազն 30%-ով կրճատելու և Երևանի կլիմայի փոփոխության հանդեպ հարմարվողականության շնորհիվ դիմադրողականության բարձրացման պարտավորություններ: Դաշնագրին միանալուց հետո կվերանայվի ԿԷԶԳԾ-ն և կնախատեսվեն նոր կլիմայի փոփոխության մեղմանն ու հարմարվողականությանն ուղղված բնապահպանական միջոցառումներ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ «ՔԱՂԱՔԱՊԵՏԵՐԻ ԴԱՇՆԱԳԻՐ ՀԱՆՈՒՆ ԿԼԻՄԱՅԻ ԵՎ ԷՆԵՐԳԻԱՅԻ» ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹՅԱՆԸ ՄԻԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՍ ԲԱՑԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Եվրոպական միության «Քաղաքապետերի դաշնագիր հանուն կլիմայի և էներգիայի» նախաձեռնությանը միանալու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում լրացումներ կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ «ՔԱՂԱՔԱՊԵՏԵՐԻ ԴԱՇՆԱԳԻՐ ՀԱՆՈՒՆ ԿԼԻՄԱՅԻ ԵՎ ԷՆԵՐԳԻԱՅԻ» ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹՅԱՆԸ ՄԻԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՍՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Եվրոպական միության «Քաղաքապետերի դաշնագիր հանուն կլիմայի և էներգիայի» նախաձեռնությանը միանալու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում էական փոփոխություններ չեն սպասվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ